բած է, Բասկեիչի պատերազմին Թուրքք մէջը ռազ-մամթերք լցած են և թնթանօղներ զետեղած. արդէն հարաւային որմի մէկ մասը քանդած և դուռ մի բացած են, որ այժմ գոցուած է։

1889 թուին բամազանի գիշերն քրդեր դարձեալ հրդեհեցին. փոքրիկ մասը այրուեցաւ։

Կանանց դուռն որ այժմ գոց է, որոյ ետևն որմի մէջ հաստատուած է մի մեծ խաչ-քար, այս քարի կէսը հիման մէջ մնած է, կէսը բարձր կանգնած. այս խաչ-քարը ունի յիշատակարան որ հողի մէջ մնացած մասի վերայ նկարագրուած է։

Այս խաչ-քարի հողից դուրս մնացած մասն նման է Խասատուրայ եկեղեցւոյ յիշատակարանի քարին, որ Շինող հայրապետի յիշատակարանն կը կարծուի։

Արդէն պատմութենէ գիտենք, որ այս հայրապետը վանք մի ևս շինած է ի Վաղարշակերտ, ուր ծնած և աղօթած է Վահան Կամսարական, որ մեծ Պատրիկ կը կոչուէր, որպէս կը գրէ «Իսկ հայր նոցա (Ներսեհ և Գագիկ) Վահան Կամսարական . . . տեսեալ զտառապանս աղքին և զվրդովմունս աշխարհին, եթող զամենայն և առանձնացաւ ինքն ի վանս Ս. Աստուածածնի ի Վաղարշակերտ յերկիրն Բագրևանդայ»։

Գերեզմանատուն.—Հայոց գերեզմանատունը 2/6 ժամ եկեղեցիէն արևելեան հիւսիս կը գտնուի, Կոյս խանումի աղբիւրի վերայ ընդարձակ և սակաւ ինչ ի հարաւ արևելս հակեալ վայր մի բռնած է։

Բագրևանդայ անընդհատ պատերազմներն մինչև անգամ գերեզմաններու աւեր տուած են, մերկացուած է հնութիւն կազմող ընտիր տապանաքարեր, որոց հետ-